FlexiPOS

Ուղեցույց

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

FlexiPOS հավելվածը թույլ է տալիս հեռախոսն օգտագործել որպես POS տերմինալ և ընդունել անհպում վճարումներ: Այն հասանելի է Android 8.1 կամ ավելի նոր օպերացիոն համակարգով աշխատող, NFC տեխնոլոգիայով և ինտերնետ հասանելիությամբ սմարթֆոններում և կարող է վճարումներ ստանալ անհպում քարտերից:

Ստորև ներկայացված են FlexiPOS տերմինալի ակտիվացման քայլերն ու օգտագործման առանձնահատկությունները:

Ինչպես ակտիվացնել ծառայությունը

- **Ներբեռնել հավելվածը Play Store-ից**
- **Մուտքագրել նախապես Բանկին տրամադրած էլեկտրոնային հասցեն**
- **Մուտքագրել այդ հասցեին ուղարկված գաղտնաբառը**

Եվ վերջ, սմարթֆոնը պատրաստ է ընդունել վճարումներ:

Ինչպես ընդունել վճարում



- **Մուտքագրել գումարը**
- **Սեղմել քարտի նշանով կոճակը**
- **Երբ էկրանին հայտնվի անհպում վճարման նշանը, մոտեցնել քարտը հեռախոսի հետնամասին**
- **Սպասել հաստատման նշանին**



- Այնուհետև կարելի է գեներացված էլեկտրոնային կտրոնն ուղարկել հաճախորդի էլ. փոստին կամ տրամադրել նրան կտրոնի QR կոդը այն սկանավորելու համար: Վերջում սեղմել Ավարտել:

Ինչպես կատարել չեղարկում / վերադարձ

- Մուտք գործել «Գործարքներ» բաժինը
- Ընտրել գործարքը* և սեղմել Չեղարկում/Վերադարձ կոճակը
- Երբ էկրանին հայտնվի անհպում վճարման նշանը, մոտեցնել քարտը հեռախոսին
- Սպասել հաստատման նշանին



*Տվյալ օրն իրականացված գործարքները հայտնվում են «Գործարքներ» մենույում: Եթե գործարքը կատարվել է նախորդ օրը կամ ավելի շուտ, անհրաժեշտ է օգտագործել Ֆիլտր:

Այլ գործողություններ



Կարգավորումներ բաժնում կարելի է նաև կատարել հետևյալ գործողությունները.

- Տերմինալի բանալիների թարմացում
- Միջանկյալ հաշվետվության դիտում
- Օրվա փակում
- Ավարտել սեսիան
- Ուղարկել լոգերը